Funded by the European Union

Open Government Partnership

PUBLIC ASSEMBLY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ, ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԲԿԳ) ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, ՍՏԱՆՁՆԱԾ

«ՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՈՒՄ»

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2024

Բովանդակություն

1. Նախաբան 4

2. Ներածություն 5

2.1. Բաց կառավարման գործընկերություն (ԲԿԳ (OGP)) 5

2.2. Հայաստան. Բաց կառավարման գործընկերություն (ԲԿԳ) 5

2.3. Հանձնառություն՝ պետության ռազմավարական հաղորդակցության ճարտարապետության ձևավորում 7

2.4. Պետություն-ՔՀԿ համագործակցություն. ՔՀԿ չափիչ 9

3. Առաջադրանքի նպատակը և մեթոդաբանությունը 10

3.1. Նպատակը և հիմնական խնդիրները. 11

3.1.1 Հիմնական փուլեր 11

3.2 Մեթոդաբանություն 12

3.2.1 Ընտրանք 13

4. Town-hall հանդիպումներ, ֆոկուս խմբային քննարկումների դիտարկումներ, արդյունքներ 13

4.1 Ֆոկուս խմբային քննարկումների դիտարկումներ 14

4.1.1 Վստահությանն առնչվող դիտարկումներ 14

4.1.2 Լսելի լինելու հնարավորության ընկալման բացակայություն 16

4.1.3 Թափանցիկություն և հաշվետվողականություն 17

4.1.4 Ուժերի անհավասարակշռություն 19

4.1.5 Բյուրոկրատիա 19

4.1.6 Իրական ներգրավվածության բացակայություն 20

4.1.7 Հաղորդակցություն և հետադարձ կապ 21

4.2 Գերատեսչություններին կից հասարակական խորհուրդների անդամների հետ հանդիպում 22

5. Քանակական հարցաթերթերի արդյունքները 24

6. Վավերացման հանդիպում (validation meeting) 26

7. Առաջարկներ 26

7.1 ՖԽ քննարկումներից հավաքագրված առաջարկներ 27

7.2 Գերատեսչություններին կից խորհուրդների կենսունակությունը բարձրացնելու և ավելի լսելի դարձնելու առաջարկներ 28

8. Հավելվածներ..... 29

1. Նախաբան

Այս փաստաթուղթը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարության կողմից Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) նախաձեռնության շրջանակներում ստանձնած, 2022-24թթ-ի գործողությունների ծրագրի 2-րդ՝ «*Պետության ռազմավարական հաղորդակցության ճարտարապետության ձևավորում*» հանձնառության (այսուհետ Հանձնառություն) վերլուծությունը (այսուհետ Զեկույց), տվյալ Հանձնառության ձևավորման ընթացքում ՀՀ քաղաքացիների կարծիքների և առաջարկների ամփոփումը «Հանրային Ասսամբլեա» սոցիալ-քաղաքացիական հասարակական կազմակերպության «Քաղաքացիական լաբորատորիա» (**Citizen Lab)** ձևաչափով:

Զեկույցը նպատակ ունի աջակցելու ՀՀ կառավարության ստանձնած Հանձնառությանը դրա ձևավորման, մշակման և իրագործման փուլերում՝ հաշվի առնելով «Քաղաքացիական լաբորատորիա» (**Citizen Lab)** ձևաչափով ՀՀ քաղաքացիներից հավաքված կարծիքները, դիտարկումներն ու առաջարկները:

Զեկույցը մշակվել է «Հանրային Ասսամբլեա» սոցիալ-քաղաքացիական հասարակական կազմակերպության (ՀԿ) կողմից՝ Բաց կառավարման գործընկերության (OGP)[1] գրասենյակի աջակցությամբ, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից[2]:

Այս փաստաթուղթը ձևավորվել է ըստ այս աշխատանքի համար մշակված մեթոդաբանության (սույն փաստաթղթին կից Հավելված 1): Ըստ այդմ՝ Հայաստանի երեք համայնքում կազմակերպվել են town-hall ձևաչափով հանդիպումներ՝ ապահովելով Հանձնառության շահառուների բազմազան ներկայացվածությունը ֆոկուս խմբերով (ՖԽ): Հետադարձ կարծիքները հավաքելու և ի մի բերելու համար օգտագործվել են նաև անանուն հարցաթերթիկներ:

Բացի սույն փաստաթղթի ձևավորման համար «Հանրային Ասսամբլեա» սոցիալ-քաղաքացիական հասարակական կազմակերպության կողմից աշխատանքների իրականացման համար նախօրոք մշակված մեթոդաբանությամբ town-hall ձևաչափով համայնքային երեք հանդիպումներից, կազմակերպվել է նաև լրացուցիչ հանդիպում-քննարկում ՀՀ գերատեսչությունների ղեկավարներին կից գործող հասարակական խորհուրդներում ներգրավված ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ՝ երկխոսության գործող հարթակների արդյունավետության շուրջ:

Հանձնառության ձևավորման, դրա շրջանակում առկա բացերի և վերջինների շտկման վերաբերյալ ամփոփ առաջարկները ներկայացված են սույն փաստաթղթի «Առաջարկներ» ենթաբաժնում:

[1] https://www.opengovpartnership.org/about/

[2] ***Այս փաստաթղթում ներկայացված տեսակետները, կարծիքներն ու եզրակացությունները, պարտադիր չէ, որ համընկնեն Եվրոպական Միության և Բաց կառավարման գործընկերության գրասենյակի կարծիքների հետ:***

2. Ներածություն

2.1. Բաց կառավարման գործընկերություն (ԲԿԳ (OGP))

Աշխարհի մի շարք կառավարություններ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՔՀԿ) ու դրանց ջատագովողները 2011 թվականին համախմբվեցին՝ ստեղծելու յուրահատուկ գործընկերություն, որը միավորում է այս հզոր ուժերին՝ խթանելու թափանցիկ, մասնակցային, ներառական և հաշվետու կառավարումը:

Բաց կառավարման գործընկերությունը (ԲԿԳ) ներառում է 75 երկիր և 104 տեղական ինքնակառավարման մարմին, որոնք ներկայացնում են ավելի քան երկու միլիարդ մարդու և քաղաքացիական հասարակության հազարավոր կազմակերպություններ:

ԲԿԳ բացառիկ առաքելություններից է պարզ, բայց ռազմավարական ծրագրերի միջոցով կառավարությունների և ՔՀԿ-ների բարեփոխումների իրականացումը, ինչի շրջանակում տարբեր երկրների կառավարությունները, տեղական ինքնակառավարման մարմինները, միավորելով ուժերը, պարտավորվում են բարեփոխումներ իրականացնել՝ ավելի բաց և թափանցիկ կառավարմամբ համատեղ ջանքերով ապահովելու հանրային ինստիտուտների թափանցիկ և հասանելի աշխատանքը քաղաքացիների, այլ ոչ զուտ կառավարիչների համար:

Վերոհիշյալ բարեփոխումներն իրականացնելու համար ԲԿԳ-ին միացած կառավարությունները, տեղական ինքնակառավարման մարմինները մշակում են եռամյա, քառամյա և այլ ժամկետներով բարեփոխումների ծրագրեր և ստանձնում դրանց իրականացման հանձնառություններ: Սա հետաքրքիր տանդեմ է պետություն-ՔՀԿ-ներ համատեղ ռեֆորմների իրականացման տեսանկյունից:

2.2. Հայաստան. Բաց կառավարման գործընկերություն (ԲԿԳ)

Հայաստանի Հանրապետության կառավարությունը միացել է ԲԿԳ նախաձեռնությանը 2011 թվականից[3]: Մինչ այժմ Հայաստանում իրականացվել է ազգային գործողությունների չորս ծրագիր:

Գործողությունների ծրագրերը միտված են եղել բարելավելու ՀՀ կառավարության ստանձնած բարեփոխումները՝ դարձնելով դրանք ավելի թափանցիկ, հաշվետու, մասնակցային և նորարար:

ԲԿԳ Անկախ հաշվետվական մեխանիզմի զեկույցում ԲԿԳ-Հայաստան 2018-2020 թթ. գործողությունների չորրորդ ծրագիրը գնահատվել է որպես առավել բարեփոխիչ: Այն աչքի էր ընկնում հանձնառությունների լավ կատարմամբ՝ չնայած պատերազմի և Covid-համավարակի մարտահրավերներին: Չորրորդ ծրագիրը բավականին հավակնոտ էր, քանի

[3] https://ogp.am/hy/about-project/

որ ներառում էր օրենսդրական փոփոխություններ, իսկ 11 հանձնառությունից առնվազն 6-ը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների առաջարկներն էին: Արդյունքում ներդրվեցին մի շարք գործընթացներ, ինչպիսիք են՝ իրական շահառուների և հանրագրերի ինստիտուտը, նվազեցվեցին կոռուպցիոն ռիսկերը կրթության և առողջապահության ոլորտներում, բարելավվեց հանրային միջոցների հատկացման թափանցիկությունը՝ պետական բյուջեից դրամաշնորհների տրամադրման մրցութային կարգի սահմանմամբ, հստակեցվեց և ընդլայնվեց հանրային պաշտոնյաների հայտարարագրերի շրջանակը, բարելավվեցին համայնքների կայքերի տեղեկատվության տրամադրման միասնականությունը և ծառայությունների մատուցման հնարավորությունը, ներդրվեց պետական ծառայությունների հետադարձ կապի ապահովման մեխանիզմը և այլն:

ՀՀ կառավարությունը, համաձայն ԲԿԳ կանոնների, գործողությունների հաջորդ ծրագիրը պետք է մշակեր 2020 թվականին, սակայն պատերազմը, համավարակը և արտահերթ խորհրդարանական ընտրությունները դարձան ծրագրի մշակման և հաստատման խոչընդոտ:

Կառավարությունը նոր ծրագրի մշակման փուլը մեկնարկեց 2021 թ. նոյեմբերին: ԲԿԳ-Հայաստան գործողությունների 5-րդ ծրագրի մշակման համար ՀՀ կառավարությունը սահմանեց առաջնահերթ ուղղություններ, որոնք բխում են ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրի[4], ԲԿԳ (Վաշինգտոն) քաղաքական ուղղությունների և Հայաստանին ներկայացված առաջարկների, ԲԿԳ անկախ հաշվետվողական մեխանիզմի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի» կողմից ՀՀ-ին ներկայացված առաջարկների և հանձնարարականների, ԲԿԳ-Հայաստան աշխատանքային խմբի նիստի ժամանակ ՔՀԿ գործընկերների առաջարկների տրամաբանությունից՝ հետևյալ ուղղություններով՝

- ✓ Տնտեսություն,
- ✓ Պետական ծառայություններ,
- ✓ Իրավունք և արդարադատություն,
- ✓ Պետական կառավարման ինստիտուցիոնալ զարգացում:

Նոր՝ ԲԿԳ 5-րդ ծրագիրը կազմելու մեկնարկին զուգահեռ՝ ՀՀ կառավարությունը գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպեց հանրային քննարկումներ և հանդիպումներ՝ ուղղված ավելի թիրախային առաջարկներ և գաղափարներ հավաքելուն:

Հանդիպումներն իրականացվեցին նաև առցանց՝ Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերից

[4] https://www.gov.am/am/gov-program/

համայնքային և քաղաքացիական ծառայողների, ՔՀԿ ներկայացուցիչների, կրթական հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Արդյունքում ստացվեց 64 առաջարկ, որոնց մի մասը համապատասխանում էր սահմանված առաջնահերթություններին և ԲԿԳ սկզբունքներին, որոշ մասը կամ չէր համապատասխանում կամ մասնակի էր համապատասխանում կամ ենթակա էր այլ առաջարկների հետ միավորման: Հանրային քննարկման համար դիտարկվեցին ԲԿԳ սկզբունքներին և պահանջներին համապատասխան առաջարկները և գաղափարները:

Մայիսի 19-ին կայացավ ԲԿԳ-Հայաստան աշխատանքային ընդլայնված նիստ, որին, բացի աշխատանքային խմբի հիմնական անդամներից, մասնակցում էին ԲԿԳ Աջակից կենտրոնի պատվիրակությունը և միջազգային կազմակերպությունների գործընկերները: Հանդիպմանը ԲԿԳ-Հայաստան քարտուղարությունը ներկայացրեց նոր գործողությունների ծրագրի նախագծում ներառված հանձնառությունները և դրանց ընտրության տրամաբանությունը: Ծրագրում ներառվել են այնպիսի հանձնառություններ, որոնք կլինեն հայեցակարգային և կկարգավորեն այդ ոլորտներում առկա բացերը և թերությունները: Այդպիսի հանձնառություններից են ***հանրային հաղորդակցման ճարտարապետության***, տվյալների քաղաքականության հայեցակարգը, աշխատանքային իրավունքի հարաբերությունները, դատական համակարգի և հանրային ռեսուրսների գործընթացների թափանցիկությունը, կոռուպցիայի դեմ պայքարի կամ կոռուպցիան կանխարգելող գործողություններ:

Այս պահին հաստատված Հայաստանի ԲԿԳ 5-րդ ծրագրով (2022-24թթ), Հայաստանը ստանձնել է 10 հանձնառություն, որոնցից մեկը «Պետության ռազմավարական հաղորդակցության ճարտապետության ձևավորում»[5] Հանձնառությունն է, որին և անդրադառնում ենք այս փաստաթղթում:

2.3. Հանձնառություն՝ պետության ռազմավարական հաղորդակցության ճարտարապետության ձևավորում

Հանձնառության շրջանակում կարգավորման հիմնական խնդիրն են պետության տեղեկատվական ու հանրային հաղորդակցության քաղաքականության մեջ առկա կառուցվածքային և բովանդակային բազմաթիվ բացերը, որոնց հավաքական հետևանք են պետության վարած քաղաքականությունների շուրջ անբավարար և ոչ պատշաճ իրազեկումը, հասարակության տարբեր շերտերի հետ կոմունիկացիոն խզվածքն ու վակուումը:

Հանձնառության հիմնական նպատակն է մշակել պետության ռազմավարական եւ տեղեկատվական քաղաքականության հայեցակարգային հիմքերը, արդիականացնել ինստիտուցիոնալ կառավարման ֆունկցիոնալ համակարգը և ներդնել նորարարական մոդելներ պետության կողմից վարվող քաղաքականությունների, հանրության հետ

[5] https://ogp.gov.am/hy/commitments/28

հաղորդակցության, հանրային իրազեկման, տեղեկատվության հասցեագրման գործընթացներին՝ ռազմավարական հաղորդակցության պլանավորման և իրականացման միջոցով:

Այս Հանձնառությունը համահունչ է ԲԿԳ ընդհանուր երեք սկզբունքներին՝

- ✓ Թափանցիկություն,
- ✓ Հաշվետվողականություն,
- ✓ Մասնակցայնություն:

Հանձնառության բարեհաջող իրականացումը կնպաստի **թափանցիկության** բարձրացմանը՝ պետության վարած քաղաքականությունների շուրջ բավարար, պատշաճ և ժամանակին իրազեկման, հասարակության տարբեր շերտերի հետ կոմունիկացիոն խզվածքների վերացման միջոցով: Այն կնպաստի պետական մարմինների, այդ թվում՝ նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց **հաշվետվողականության** բարձրացմանը՝ պարբերական և համապարփակ տեղեկատվություն տրամադրելու միջոցով: Քաղաքացիները, ՔՀԿ-ները ժամանակին և պատշաճ միջոցներով կտեղեկանան իրենց համար առանձին քաղաքականությունների, բարեփոխումների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում կապահովվի նշվածների պատշաճ իրազեկումը: Հանրային հաղորդակցության ոլորտի կարգավորումը կնպաստի պաշտոնական տեղեկատվության հիման վրա հանրային **մասնակցային** դիրքորոշման ձևավորմանը, մասնագիտական կազմակերպությունների եւ ՔՀԿ կարողությունների զարգացմանը, պետություն-քաղաքացի ամուր կապի ստեղծմանը:

Հանձնառության ժամկետներն են 2022 դեկտեմբեր-2024 հունիսը, լիազոր մարմիններն են ՀՀ վարչապետի աշխատակազմը, ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի գրասենյակը, շահագրգիռ այլ պետական մարմիններ, քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատվածից՝ ՀՀ քաղաքացիները, «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը», «Հանրային լրագրության ակումբը», «Կ.Ե.Տ.» ՀԿ և այլ ՔՀԿ-ներ:

Այս զեկույցի մշակման պահին (2024թ-ի մայիս) Հանձնառության շրջանակներում իրականացվել է՝

1. Միջազգային փորձի ուսումնասիրություն (իրականացված՝ 12.2022թ),
2. Ռազմավարական հաղորդակցության քաղաքականության հայեցակարգի հիմքերի ձևավորում (իրականացված՝ 12.2023թ),
3. Կառավարության միասնական ռազմավարական հաղորդակցության տեղեկատվական քաղաքականության և իրագործման ինստիտուցիոնալ մոդելի մշակում՝ ընթացքի մեջ (ժամկետ՝ 06.2024թ)
4. Մասնակցային կառավարման մշտադիտարկման և ընթացակարգերի սպասարկման ինստիտուցիոնալ մեխանիզմի ձևավորում՝ ընթացքի մեջ (ժամկետ՝ 06.2024թ):

2.4. Պետություն-ՔՀԿ համագործակցություն. ՔՀԿ չափիչ

Անկախ այս փաստաթղթի մշակման առաջադրանքի նախնական բնութագրից, որտեղ կարևորվել էր միայն Հանձնառության մասին ՀՀ քաղաքացիների դիրքորոշումն ու առաջարկը, Ձեկույցի տվյալների հավաքման և վերլուծությունների փուլում, ի լրումն, հատուկ ուշադրություն է դարձվել ՀՀ-ում գործող ՔՀԿ-ների դերին, պետություն-ՔՀԿ-ներ համագործակցության վիճակին: Հատուկ այդ նպատակով կազմակերպվել է առանձին Town-hall ձևաչափով հանդիպում հենց ՔՀԿ-ների հետ, որի արդյունքների մասին անդրադարձը հաջորդ գլուխներում է:

Ըստ վերջին տարիների մասին բաց աղբյուրներում առկա վերլուծությունների (*օրինակ՝ ԹԻՀԿ փորձագետների կողմից մշակված ՔՀԿ չափիչ 2023 Հայաստան զեկույցը*)[6], պետություն-ՔՀԿ համագործակցությունն անկում է ապրում: Իսկ Հայաստանում ՔՀԿ միջավայրի ընդհանուր գնահատականը 2023թ.-ին 2022թ.-ի համեմատ չի փոխվել:

Ամենաբարձր գնահատականներն ունեցող երեք ոլորտները նույնն են, ինչ 2022 թվականին՝ միավորումների ազատություն (5,7 միավոր), ֆինանսավորման մատչելիություն (5,3) և խաղաղ հավաքների ազատություն (5,3 միավոր), իսկ ամենացածր գնահատված ոլորտներն են պետություն-ՔՀԿ համագործակցությունը (4,0 միավոր), պետական աջակցությունը (4,1 միավոր), պետության կողմից պաշտպանության պարտականությունը (4,5 միավոր) և թվային իրավունքները (4,5 միավոր):

ՀՀ օրենսդրությամբ՝ որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական հասարակությանը և հանրությանը ներգրավելու նպատակով սահմանված են մի շարք ինստիտուցիոնալ մեխանիզմներ, որոնք ներառում են հանրային քննարկումների էլեկտրոնային հարթակը (e-draft), հանրային լսումները, խորհրդակցական մարմինները:

Ըստ օրենքի՝ օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են պարտադիր հանրային քննարկման, բացառությամբ՝ միջազգային պայմանագրերի վավերացման մասին օրենքի նախագծերի: Եթե կառավարություն է ներկայացվել հանրային քննարկում չանցած նախագիծ, ապա կառավարությունը կարող է վերադարձնել այն ներկայացնող մարմնին: Սակայն պարտադիր հանրային քննարկման վերաբերյալ դրույթը խախտելու համար ***որևէ վարչական պատժամիջոց նախատեսված չէ***: Բացի այդ, պարտադիր հանրային քննարկման դրույթը չի տարածվում խորհրդարանի հեղինակած նախագծերի և ռազմական ու արտակարգ դրությանն առնչվող իրավական ակտերի վրա:

Քաղաքականության իրականացման և մշտադիտարկման գործընթացներում մասնակցությունն ապահովող իրավակարգավորումներ չկան: Պետական քաղաքականության և ծրագրերի իրականացման, մշտադիտարկման ու գնահատման փուլերում ՔՀԿ-ներին ներգրավելը սահմանափակ է և հաճախ կախված է ՔՀԿ-ների

[6] https://transparency.am/hy/publication/pdf/353/10893

նախաձեռնողականությունից և դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի առկայությունից:

3. Առաջադրանքի նպատակը և մեթոդաբանությունը

Ինչպես նշել էինք վերոգրյալ, ԲԿԳ-Հայաստան 5-րդ գործողությունների ծրագրի «Պետության ռազմավարական հաղորդակցության ճարտարապետության ձևավորումը» հանձնառության հիմնական նպատակն է մշակել պետության ռազմավարական հաղորդակցության և տեղեկատվական քաղաքականության հայեցակարգային հիմքերը, արդիականացնել ինստիտուցիոնալ կառավարման ֆունկցիոնալ համակարգը: Նպատակադրված է նաև ներդնել նորարարական մոդելներ՝ պետության կողմից վարվող քաղաքականությունների, հանրության հետ հաղորդակցության, հանրային իրազեկման, տեղեկատվության հասցեագրման գործընթացներում՝ ռազմավարական հաղորդակցության պլանավորման և իրականացման միջոցով: Հանձնառությունից ակնկալվող արդյունքներն են.

- ✓ Հաստատել պետության գործունեության և հանրային քաղաքականությունների վերաբերյալ պրոակտիվ և հստակ պլանավորված իրազեկման կառուցակարգեր,
- ✓ Հաստատել տարբեր արտակարգ իրավիճակներում ռազմավարական հաղորդակցության կառավարման ու գործընթացների համակարգման կարգեր /պրոտոկոլներ/,
- ✓ Հաստատել և ներդնել մանիպուլյատիվ ինֆորմացիայի, ապատեղեկատվության և կեղծ տեղեկատվության տարածմանը պետական պատշաճ արձագանքման մեխանիզմներ,
- ✓ Արդիականացնել ՀՀ կառավարության ռազմավարական հաղորդակցության ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ համակարգը:

Վերջնարդյունքում ակնկալվում է պետական կառավարման համակարգի բոլոր մակարդակներում ներդնել հանրային հաղորդակցության ռազմավարություն, ինչի շնորհիվ հանրության հետ կապը կդառնա ավելի ամուր, կստեղծվեն հետադարձ կապի մեխանիզմներ, հանրությանը հաղորդագրություն հասցնելու արդյունավետ խողովակներ, արագ արձագանքման գործիքներ և թվային լուծումներ, որոնք կաշխատեն համընթաց և հաղորդակցությունը կվերածեն ավտոմատացված ու ինստիտուցիոնալ համակարգի:

«Հանրային Ասամբլեա» սոցիալ-քաղաքացիական հասարակական կազմակերպությունը (ՀԿ) այս առաջադրանքի շրջանակում, ըստ ՀԿ-ի թիմի մշակած և ԲԿԳ ծրագրի պատասխանատուների հետ համաձայնեցված մեթոդաբանության, ձևավորել և հավաքել է Հանձնառության շահառուների կարծիքները և մշակել է այս Զեկույցը, որը ներառում է ինչպես արդյունքների վերլուծությունը, այնպես էլ բարեփոխումներին միտված առաջարկներ:

3.1. Նպատակը և հիմնական խնդիրները.

Առաջադրանքը միտված է հետևյալ երեք հիմնական խնդիրների ուղղությամբ քայլեր ձեռնարկելուն.

.

1. Բարելավել ԲԿԳ գործողությունների ծրագրով նախատեսված ռազմավարական հաղորդակցության ճարտարապետության հանձնառությունը,
2. Խթանել բաց երկխոսությունը քաղաքացիների և որոշում կայացնողների միջև,
3. Իրազեկել և ուղղորդել որոշում կայացնողներին քաղաքացիների ներգրավման գործընթացի ինստիտուցիոնալացման կարևորության մասին:

ԲԿԳ ծրագրի պատասխանատուներից ստացված կարծիքների և մեկնաբանությունների հիման վրա ՀԿ-ն նախապես պլանավորել է հետազոտության փուլերը, մշակվել է առաջադրանքի իրականացման մեթոդաբանությունը: ՀԿ-ի կողմից կարծիքների հավաքման և ամփոփման համար կիրառվել է «քաղաքացիական լաբորատորիա» (Citizen lab) ձևաչափը՝ քաղաքացիներին հրավիրելով երկխոսության և քննարկման (town-hall ձևաչափով) նախապես մշակված հարցաշարով:

3.1.1Հիմնական փուլեր

Այս առաջադրանքն իրականացվել է հետևյալ հիմնական փուլերով.

- **Մեկնարկային փուլ և մեթոդաբանության լրամշակում**:

Մեկնարկային փուլում ՀԿ-ի թիմը մշակել է այս առաջադրանքի համար մշակված մեթոդաբանությունը, այն համաձայնեցրել ՀՀ վարչապետի աշխատակազմի ԲԿԳ պատասխանատուի և ԲԿԳ ծրագրի ղեկավարի հետ, ըստ այդմ՝ նաև լրամշակել այն: Հաջորդիվ թիմն իրականացրել է մեթոդական կողմնորոշման դասընթաց՝ ծրագրի հիմնական անձնակազմի և ֆոկուս խմբային քննարկումների մոդերատորների համար:

Այս փուլում town-hall հանդիպումների իրականացման նպատակով թիմը մշակել է նաև ֆոկուս խմբերի համար նախատեսված երկու հարցաշար. 1. որակական հարցաշար՝ նախատեսված ֆոկուս խմբային քննարկումների համար և 2. քանակական անանուն հարցաշար՝ ՖԽ քննարկման մասնակիցների կողմից հանդիպումից հետո լրացնելու համար:

- Տվյալների հավաքագրում

Այս փուլում, համաձայն մեթոդաբանության, Արմավիր, Վանաձոր և Երևան քաղաքներում ՀԿ թիմը town-hall ձևաչափով կազմակերպել և իրականացրել է ֆոկուս-խմբային 3 քննարկում՝ պարզելու քաղաքացիների արձագանքը ռազմավարական հաղորդակցության ճարտարապետության վերաբերյալ: ՀԿ-ի կողմից կազմակերպված 3 հանդիպումներին մասնակցել է շուրջ 50 քաղաքացի, որոնք ներկայացրել են հանրության տարբեր խմբեր՝ ըստ իրենց աշխարհագրական և գենդերային ներառականության:

Հանդիպման արդյունքներով հավաքված կարծիքները վերլուծվել են ՀԿ թիմի կողմից: Բացի վերոգրյալ երեք town-hall ձևաչափով քննարկումներից, ՀԿ թիմը սեփական նախաձեռնությամբ կազմակերպել է ևս մեկ հանդիպում-քննարկում նախարարությունների և պետական կառավարման համակարգի այլ մարմիններին կից գործող հասարակական խորհուրդներում ընդգրկված ՔՀԿ ներկայացուցիչների հետ՝ առաջադրանքի համար առավել ընդգրկուն և բազմակողմանի կարծիքներ և տեղեկատվություն ստանալու և ի մի բերելու նպատակով:

❖ Վալիդացիոն հանդիպում որոշում կայացնողների հետ

Այս փուլում ՀԿ թիմը կազմակերպել է քաղաքականություն մշակողների և իրականացնողների հետ արդյունքների ամփոփման և վավերականացման վալիդացիոն հանդիպում, որի ընթացքում քաղաքականություն մշակողներին ներկայացվել են town-hall հանդիպումների ընթացքում քաղաքացիներից, ՔԿՀ-ներկայացուցիչներից ստացված արձագանքներն ու առաջարկները՝ ուղղված համագործակցային երկխոսությանը: Վալիդացիոն հանդիպումը ևս իրականացվել է նախորդ չորս քննարկումների տրամաբանությամբ և ձևաչափով:

❖ Վերլուծություն և հաշվետվության ներկայացում

Վալիդացիոն հանդիպումից հետո ստացված վերջնական արդյունքների հիման վրա ՀԿ թիմը մշակել է սույն զեկույցը, որը ներառում է ինչպես վերլուծությունը, այնպես էլ բարեփոխումներին միտված առաջարկներ:

3.2 Մեթոդաբանություն

Ծրագրի շրջանակում մշակվել է առաջադրանքին հարմարեցված մեթոդաբանություն՝ Հանձնառության վերաբերյալ քաղաքացիների կարծիքները մասնակցային ձևաչափով հավաքելու համար (Մեթոդաբանության հաշվետվությունը, որը մանրամասն ներկայացվել է ԲԿԳ ծրագրի պատասխանատուներին 2024թ. հունվարին, կից ներկայացված է սույն փաստաթղթի անբաժանելի մաս համարվող Հավելված 1-ում): Այդ նպատակով ընտրված համայնքներում որոշակի չափորոշիչներով ձևավորվել են ՀՀ քաղաքացի համարվող անձանցից կազմված ֆոկուս խմբեր (ՖԽ)-եր, որոնց հետ իրականացվել են Town-hall ձևաչափով հանդիպումներ: Այդպիսիք թույլ են տալիս պարզեցնել շփումը, իրականացնել բաց քննարկումներ ֆոկուս խմբերի թիրախային ներկայացուցիչների հետ:

Town-hall հանդիպումների ընթացքում կատարվել է պրակտիկ աշխատանք, անցակցվել են ազատ քննարկումներ մասնակիցների հետ՝ նպատակ ունենալով իրականացնել կարծիքների և պատասխանների փորձագիտական վերլուծություն, ամփոփում և եզրակացությունների ձևավորում:

Թիրախային ՖԽ-երի մասնակիցներն ընտրվել են սեռատարիքային, կրթական և աշխարհագրական համապատասխան չափորոշիչներով՝ նպատակ ունենալով ի մի բերել

Հանձնառության արդյունքում ձևավորվելիք գործիքների պոտենցիալ օգտագործողների կարծիքները:

3.2.1 Ընտրանք

Սույն փաստաթղթին կից Հավելված 1-ով ներկայացված «Մեթոդաբանության հաշվետվության» մեջ մանրամասն ներկայացված է, թե ինչպես է կատարվել town-hall հանդիպումների անցկացման համայնքների և ՖԽ-երի մասնակիցների ընտրանքը: Նաև ներկայացված է այս առաջադրանքի համար մշակված ընտրանքի հիմնավորումը: Ստորև ներկայացվում է ընտրանքն՝ աղյուսակով.

Աղյուսակ 1. *ՖԽ ընտրանք*

Ընտրանքի չափորոշիչները	Երևան	Իջևան	Արտաշատ	Ընդամենը
Սեռ				
Արական	8	8	8	24
Իգական	7	7	7	21
Տարիք				
18-30	6	6	6	18
31-50	5	5	5	15
51 և ավելի	4	4	4	12
Կրթություն				
Միջնակարգ	6	6	6	18
Միջին մասնագիտական	4	4	4	12
Բարձրագույն	5	5	5	15

4. Town-hall հանդիպումներ, ֆոկուս խմբային քննարկումների դիտարկումներ, արդյունքներ

Սույն ուսումնասիրության մեջ ներկայացված դիտարկումները բխում են մի շարք ՖԽ-երի քննարկումներից, որոնք անցկացվել են հանրության տարբեր հատվածների հետ Արմավիրի և Լոռու մարզերում և Երևանում: Քննարկումների նպատակն էր բացահայտել մասնակիցների տեսակետները կառավարության բարեփոխումների վերաբերյալ, մասնավորապես, նաև պարզել քաղաքացիների ներգրավվածությունը և որոշում կայացնելու համար ստեղծված առցանց հարթակներում սեփական դիտարկումները հայտնելու փորձը: Օգտագործվել են որակական տվյալների վերլուծության մեթոդներ՝ ի մի բերելու մասնակիցների կողմից կրկնվող խնդիրները, տրամադրությունները և մտահոգությունները՝ կառավարության որոշումների կայացման հանդեպ վստահության և դրանց մասնակցության վերաբերյալ:

Աղյուսակ 2. *Հանդիպումների ժամանակացույց*

#	Վայրը	Ամսաթիվը 2024թ	Մասնակիցներ	Մասնակիցների քանակ
Town-hall հանդիպում	Արմավիր	13 Փետրվար	Ֆոկուս խմբի մասնակիցներ, ՀԿ փորձագիտական թիմ:	19
Town-hall հանդիպում	Վանաձոր	22 Փետրվար	Ֆոկուս խմբի մասնակիցներ, ՀԿ փորձագիտական թիմ:	18
Town-hall հանդիպում	Երևան	11 Մարտ	Ֆոկուս խմբի մասնակիցներ, ՀԿ փորձագիտական թիմ:	20
Town-hall հանդիպում	Երևան	12 Ապրիլ	ՀԿ-ի փորձագիտական թիմ Գերատեսչություններին կից ՔՀԿ ներկայացուցիչներ:	14

4.1 Ֆոկուս խմբային քննարկումների դիտարկումներ

4.1.1 Վստահության առնչվող դիտարկումներ

Հանրային վստահությունը և մասնակցայնությունը ժողովրդավարական կառավարման հիմնարար տարրեր են՝ կարևոր կառավարության բարեփոխումների օրինականության և արդյունավետության ապահովման համար: Այնուամենայնիվ, ֆոկուս խմբերի շրջանակներում վերջին քննարկումները բացահայտեցին անհանգստացնող միտումներ, ըստ որոնց՝ անհատ քաղաքացիները թերահավատություն են հայտնում կառավարական հարթակների կողմից օժանդակվող որոշումների կայացման գործընթացներում իրենց ներգրավվածության կարևորության և ազդեցության առնչությամբ:

Այս ուսումնասիրությամբ փորձ է արվում բացահայտել նշված տրամադրությունների հիմքում ընկած պատճառները և կառավարության նախաձեռնություններում քաղաքացիների ներգրավվածության բարձրացման հնարավոր արդյունքները:

Ֆոկուս խմբերի քննարկումները բացահայտեցին երկու գերակշռող թեմա՝ կապված վստահության և կառավարության բարեփոխումներին մասնակցության հանրային ընկալումների և իրազեկվածության հետ: Նախ, մասնակիցները ցանկություն հայտնեցին ակտիվորեն նպաստել քաղաքականության մշակման գործընթացին, սակայն թերահավատություն հայտնեցին իրենց մասնակցության իմաստալից լինելու կամ նպատակահարմարության վերաբերյալ: Շատերը կարծում էին, որ իրենց ***մասնակցությունը զուտ խորհրդանշական է և իրականում չի ազդում որոշումների կայացման արդյունքների վրա***: Այս ընկալմանը գումարվել է թափանցիկության և պետական մարմինների

արձագանքների բացակայությունը՝ կապված քաղաքականության վերանայումների մեջ քաղաքացիների ներդրումների ներգրավման հետ:

Մեջբերում՝ *«Պատճառը ոչ թե անտարբերությունն է կամ ցանկության բացակայությունը, այլ իրազեկվածության պակասը, ընդ որում՝ ոչ միայն համայնքի բնակիչների, այլև հենց համայնքի ղեկավարների: Պատկան մարմիններն իրենք էլ երբեմն տեղյակ չեն օնլայն համակարգերից, հենց համայնքների աջակցության համար կառավարության ընդունած ծրագրերից, այդ պատճառով էլ ոչ դիմում են, ոչ օգտվում: Գուցե դիմելու ձևերն էլ չգիտեն: Մեզ էլ, որպես համայնքի բնակչի, պատրաստ են օգնել, երբ դիմում ենք իրենց տարբեր հարցերով, բայց տեղյակ չեն, թե ինչ ծրագրեր կան: Իրազեկման լուրջ խնդիրներ կան»:*

Երկրորդ, մասնակիցները հիասթափված էին առցանց հարթակների միջոցով իրենց ներգրավվածության ակնհայտ անտեսումից: Չնայած հետադարձ կապի և առաջարկների ներկայացման համար ժամանակի և ջանքերի ներդրմանը, շատ մասնակիցներ նկատեցին, որ իրենց ներդրումների և պետական կառույցների կողմից ձեռնարկվող գործողությունների միջև կապ չկա: Գերակշռող տրամադրությունը անտեսման զգացումն էր, որի բերումով մասնակիցները հարցնում էին՝ արդյոք իրենց ձայնն իսկապես լսելի՞ է կամ դիտարկվե՞լ է բարեփոխումների գործընթացում:

Այսպես, օրինակ, Արմավիրի ՖԽ 16 մասնակցից միայն 4-ն է (25 տոկոս) օգտվել E-draft-ից կամ լսել դրա մասին, և միայն 4-ն է բաժանորդագրված դրան: Ֆոկուս խմբի կին մասնակիցներից մեկը մուտք է գործել համակարգ, ծանոթացել պատմության դասագրքի անվանափոխման մասին նախագծին, հարցում գրել, սակայն պարզաբանում չի ստացել: Նույն համակարգից օգտվել ու 2 նախագծերի քվեարկել է մասնակից աղջիկը: Իրենց համայնքի դպրոցի փակմանն առնչվող նախագծով «դեմ» ձայները գերակշռել են, սակայն, միևնույն է, նախագիծն ընդունվել է, ու աղջկա ներկայացրած դպրոցը փակվել է: Մասնակիցները հրաժարվում են հարթակի միջոցով որևէ կարևոր խնդրի անդրադառնալուց, քանի որ նույնիսկ հասարակական մեծ արձագանքի ալիքի դեպքում որոշումները կայացվում են կառավարական կաբինետներում՝ այդպիսով ձևական դարձնելով հանրության ներգրավումը:

ՖԽ քննարկումներն ընդգծում են վստահության ձևավորման և կառավարության բարեփոխումներում քաղաքացիների ներգրավվածության արժևորման կարևոր մարտահրավերները: Այս մարտահրավերների լուծումը պահանջում է ակտիվ միջոցներ՝ քաղաքականության մշակման թափանցիկությունը, հաշվետվողականությունը և արձագանքողականությունը բարձրացնելու համար: Պետական իշխանությունները պետք է առաջնահերթություն տան հստակ հաղորդակցությանը, տրամադրեն հետադարձ կապեր և ցույց տան քաղաքացիների մասնակցությունից ստացվող շոշափելի արդյունքներ՝ վերակառուցելու հանրային վստահությունը կառավարման նախաձեռնությունների նկատմամբ: Այստեղ հարկ է նշել, որ համեմատաբար փոքր համայնքներում շեշտվել է համայնքի ղեկավարին անձամբ ճանաչելու և համայնքին վերաբերող խնդիրներն անմիջականորեն իրեն ներկայացնելու հնարավորությունը:

Մեջբերում. *«Իհարկե, տարբեր հարցերով օնլայն դիմելը ժամանակ է խնայում, բայց համայնքներում մենք համայնքի ղեկավարության հետ սերտ կապի մեջ ենք, հարցերի դեպքում միանգամից վարչական ղեկավարի հետ ենք կապվում՝ ուղիղ կամ մտնում համայնքապետարան: Միջավայրն այնպիսին է, որ չենք կաշկանդվում: Գյուղերում ավելի բաց են. ֆորմալության կարիք չկա, որ օնլայն դիմումներ գրեն» (Արմավիր):*

Մեջբերում. *«Փոքր քաղաքներում ավելի հեշտ է համայնքապետի ու իր թիմի հետ շփվելն ու աշխատելը, գոնե լսելի ես դառնում: Իսկ մեյլերն ու հեռախոսահամարները հիմնականում կտրվող օղակ են: Փոստով կարող ես նամակ ուղարկել ու չիմանալ՝ ում հասավ, ինչ եղավ: Շատ դեպքերում տվյալ անձից է կախված՝ կլսե՞ն քաղաքացուն: Անձնական կապերն են հաճախ աշխատում» (Վանաձոր):*

Վանաձորի ՖԽ մասնակիցների մոտ կարմիր թելով անցնում էր այն մտահոգությունը, որ, հաշվի առնելով, որ ընտրված համայնքի ղեկավարն արդեն քանի տարի է՝ ձերբակալված է, համայնքի ավագանու նիստերը ձախողված են, ավագանիների հետ կապը՝ կտրված, և մի շարք որոշումներ, որոնք կախված են համայնքի ղեկավարից, պարզապես սառեցված են:

Կառավարության բարեփոխումների վերաբերյալ որոշումների կայացմանը մասնակցելու վստահության բացակայությունը բխում է մի քանի փոխկապակցված գործոններից, որոնք հանգեցնում են հասարակության թերահավատությանը և հիասթափությանը: Այս պատճառների ըմբռնումը կարևոր է քաղաքականություն մշակողների և շահագրգիռ կողմերի համար՝ հաղթահարելու քաղաքացիների իմաստալից ներգրավվածության խոչընդոտները: Հաջորդ բաժնում ներկայացված են հիմնական գործոնները, որոնք հանգեցնում են կառավարության որոշումների կայացմանը մասնակցելու հարցում հասարակության անվստահությանը:

Հետաքրքիր էր լսել միջին տարիքի կանանց կարծիքն առ այն, որ հաստատակամորեն դիմելու և խնդիրներից անկաշկանդ խոսելու բարդույթ կա առաջին հերթին հենց ավագ սերնդի մոտ: Իհարկե, եղել են հարցեր, որոնցով դիմել են՝ ճանապարհի, համայնքային տարածքի բարեկարգման, ու խնդիրները լուծվել են: Բայց դրանք մասնավոր դեպքեր են: Հիմնականում միջին և բարոր տարիքի մարդիկ անվստահություն ու կաշկանդվածություն են ցուցաբերում, ինչից նաև մասնակցայնությունն է տուժում: Մարդը կարող է իրազեկ լինել, բայց համարձակ՝ ոչ:

4.1.2 Լսելի լինելու հնարավորության ընկալման բացակայություն

Հիմնական պատճառներից մեկը, որ մարդիկ չեն վստահում որոշումների կայացման վրա իրենց ազդեցության հնարավորությանը, այն ընկալումն է, որ իրենց ներդրումը չի հանգեցնում շոշափելի արդյունքների: Շատ անհատներ կարծում են, որ կառավարական գործընթացները կանխորոշված են կամ կրում են շահագրգիռ կոնկրետ կողմերի ազդեցությունը, ինչի հետևանքով անհատական ներդրումն անհետևանք է թվում: Երբ քաղաքացիները նկատում են իրենց ներգրավվածության և քաղաքականության իրական արդյունքների միջև կապի խզում, ներդրումներ ունենալու հավանականությունը պակասում է:

Մեջբերում.*«Խնդիրները կան, դրանց լուծման ուղիների մասին էլ պատկերացում ունենք: Բայց մտածում ես՝ եթե դիմես, խոսես, իշխանությունն ինչպե՞ս կարձագանքի: Եթե այս մտավախությունը չլինի, շատ հարցերով կդիմենք: Իմ հարցը հազար ու մի մարդու է առնչվում: Ասում ես՝ իսկ ինչո՞ւ ուրիշները չեն խոսում: Մյուս կողմից էլ մտածում ես՝ մեր պետությունը կարո՞ղ է այդ հարցերը լուծել: Օրինակ՝ թափառող շների խնդիրը: Հարձակվում են, վնասում մարդկանց: Բայց շներին վնասելը պատժելի է: Չենք կարողանում լուծում գտնել» (Արմավիր):*

Հիասթափության զգացումը հաճախ առաջանում է, երբ մարդիկ կարծում են, որ որոշումներն ընդունվում են անկախ իրենց ներդրումից, կամ, որ համակարգը նախագծված է հատուկ շահերի համար: Այս ընկալումը կարող է քաղաքացիների մոտ առաջացնել անզորության զգացում՝ հիասթափեցնելով քաղաքացիական գործունեությամբ զբաղվելուց:

Երբ անհատներն ականատես են լինում, որ քաղաքականությունները ձևակերպվում կամ իրականացվում են առանց հանրային արձագանքներն իրապես հաշվի առնելու, դա ամրապնդում է համոզմունքը, որ իրենց մասնակցությունը զուտ խորհրդանշական է: Պատասխանատվության այս բացակայությունը կարող է քայքայել վստահությունը ժողովրդավարական գործընթացների նկատմամբ և հանգեցնել ապատիայի կամ քաղաքացիական կյանքից դուրս մնալուն:

Այս խնդրի լուծման համար շատ կարևոր է ստեղծել մեխանիզմներ, որոնք ցույց կտան հանրային ներդրման ազդեցությունը որոշումների կայացման վրա: Գործադիր մարմինները պետք է ակտիվորեն տեղեկացնեն, թե ինչպես է քաղաքացիների արձագանքն ազդել կոնկրետ քաղաքականության կամ գործողությունների վրա: Փակելով հետադարձ կապի օղակը և ցույց տալով կոնկրետ օրինակներ, թե ինչպես է հանրային ներգրավվածությունը հանգեցնում իմաստալից արդյունքների, գործընթացի նկատմամբ վստահությունը կարող է վերակառուցվել:

«Ժամանակ ենք ծախսում, ռեսուրս ենք դնում, որ մասնակցայնության հարց լուծենք: Համայնքապետերը պետք է լավ ճանաչեն իրենց համայնքը, հստակեցնեն մարդկանց համար՝ որ խնդրի դեպքում ուր դիմել: Յանկացած մարդ կարող է իմանալ պետական կառույցների թեժ գծերը, համայնքապետարանից բացի՝ այլ օղակները: Անձամբ է պետք նպատակասլաց լինել խնդիրները լուծելիս: Ինքս, եղել է, խնդիր եմ ունեցել, հանդիպում եմ պահանջել համայնքապետից: Փաստաթղթերով հիմնավորել եմ խնդիրը, և հարցը լուծվել է»,-ասում է միջին տարիքի կինը (Արմավիր):

4.1.3 Թափանցիկություն և հաշվետվողականություն

Թափանցիկությունը և հաշվետվողականությունը կարևոր տարրեր են քաղաքացիների և նրանց կառավարությունների միջև վստահության ամրապնդման համար, հատկապես առցանց ներգրավվածության և հանրային խորհրդակցությունների համատեքստում: Երբ քաղաքացիները ժամանակ են տրամադրում թվային հարթակների միջոցով հետադարձ կապ պահպանելու կամ հանրային խորհրդակցություններին մասնակցելու համար, նրանք իրավացիորեն ակնկալում են թափանցիկություն իրենց

ներդրումն օգտագործելու հարցում: Այնուամենայնիվ, երբ նկատվում է հստակ հաղորդակցության կամ արձագանքի բացակայություն իշխանությունների կողմից որոշումների կայացման գործընթացների վրա քաղաքացիների ձայնի ազդեցության վերաբերյալ, դա կարող է հանգեցնել հանրության շրջանում աճող անվստահության և ցինիզմի:

Մեջբերում. *«Պետությունը պիտի մեխանիզմ մտածի, որ իր որոշումները հասնեն քաղաքացուն: Երբ անձը մասնակցում է քննարկումներին, իրենց թվում է՝ բողոքում ես: Դրա համար քաղաքացիները հաճախ խուսափում են համայնքի կառավարման քննարկումներին մասնակցելուց: Որոշումներին մասնակցելու ակտիվությունը տարբեր պատճառներով կարող է թերի լինել: Մեր համայնքապետարանում դրված է անցակետ, ու դրանով անցնելու համար պետք է բացատրություն տաս: Ընդունելության օր կա, բայց որոշումների կայացման հարցեր կարծեմ չեն քննարկվում: Սա հիմնականում սոցանապահովների համար է: Հիմա մենք անգամ ավագանու անդամներին չենք ճանաչում: Իրենք պետք է իրենց ճանաչելի դարձնեն, թե չէ քաղաքացին իր բողոքներն օն-լայն հարթակում ինչ-որ կերպ արտահայտում է: Բայց որոշումների կայացմանն այլ կերպ քաղաքացին չի մասնակցում: Մենք չգիտենք՝ երբ ու ինչպես է համայնքային քննարկում լինում: Նույնիսկ հեռախոսահամարները հասանելի չեն: Անգամ ուղիղ կապն է դժվարացել. դրել են մեկ պատուհան» (Վանաձոր):*

Քաղաքացիները ցանկանում են իմանալ, որ իրենց կարծիքներն ու առաջարկները հավաքվում են ոչ միայն ցուցադրական նպատակներով, այլ իսկապես հաշվի են առնվում քաղաքականություն մշակելիս: Թափանցիկությունը ենթադրում է հստակ տեղեկատվության տրամադրում այն մասին, թե ինչպես են քաղաքացիների արձագանքներն օգտագործվում որոշումների կայացման գործընթացներում: Սա կարող է նշանակել հանրային քննարկումների հաշվետվությունների կամ ամփոփագրերի փոխանակում՝ կարևորելով քաղաքացիների բարձրացրած հիմնական թեմաներն ու մտահոգությունները և բացատրելով, թե ինչպես է այս ներդրումն ազդում քաղաքական որոշումների վրա:

Վանաձորում տղամարդ մասնակիցն ասում է՝ ակտիվ մասնակցություն ունի համայնքի հանրային, օրենսդրական հարցերին, անգամ զանգով կարող է կարծիք հայտնել: Բայց դժգոհում է՝ դա ոչինչ չի փոխում: *«Քառամյա ծրագիրն, օրինակ, այդքան մշակվում է, բայց շպրտվում է մի կողմ: Հետո 4 տարի անց նորն են սկսում մշակել: Այսինքն՝ հետադարձ կապ ու վերահսկողություն չկա: Ի՞նչ զարգացման մասին է խոսքը: Ֆունդամենտալ խնդիրներին լուծում չի լինում: Ժամանակին առաջարկում էինք՝ հարցման միջոցով պարզել, թե որ թաղամասում որ խնդիրն է առաջնային, այդպես լուծեն, դա էլ չեղավ»:*

Հաշվետվողականությունը թափանցիկության հետ ձեռք ձեռքի տված է: Խոսքը ոչ միայն տեղեկատվության փոխանակման մասին է, այլ նաև երաշխավորելու, որ որոշում կայացնողները հաշվետու են իրենց գործողությունների և որոշումների համար: Երբ քաղաքացիները տեսնում են իրենց մասնակցությունից բխող շոշափելի արդյունքներ, ինչպիսիք են՝ քաղաքականության փոփոխությունները կամ բացատրությունները, կամ թե ինչպես է իրենց մասնակցությունը կամ կարծիքն ազդել որոշման վրա, դա ամրապնդում է նրանց վստահությունը համակարգի նկատմամբ:

Այս խնդիրները լուծելու համար կառավարությունները պետք է առաջնահերթորեն շեշտադրեն հանրության ներգրավումը հստակ և բաց հաղորդակցության մեջ: Սա ենթադրում է ի սկզբանե հստակ ակնկալիքներ սահմանել, թե ինչպես կօգտագործվի քաղաքացիների ներդրումը, կանոնավոր տեղեկացնել խորհրդակցությունների ընթացքի վերաբերյալ և առաջարկել հետադարձ կապի մեխանիզմներ՝ մասնակիցների մտահոգությունները լսելու կամ հարցերը լուծելու համար: Կառավարության որոշումների կայացման գործընթացներում թափանցիկության և հաշվետվողականության բարելավմամբ իշխանությունները կարող են ավելի մեծ վստահություն ստեղծել իրենց քաղաքացիների մոտ՝ ի վերջո հասնելով ավելի արդյունավետ և ներառական քաղաքականության մշակմանը:

4.1.4 Ուժերի անհավասարակշռություն

Որոշումներ կայացնող կառույցներում ուժերի անհավասարակշռությունը կարող է խանգարել քաղաքացիների անմիջական և արդյունավետ մասնակցությանը: Քաղաքացիները կարող են ընկալում ունենալ, որ որոշումների կայացման գործում գերակշռում են քաղաքական էլիտաները, հատուկ շահեր սպասարկող խմբերը կամ կորպորատիվ կազմակերպությունները, ինչն ուղղակիորեն բարդացնում է սովորական անհատների ազդեցությունն արդյունքների վրա: Ուժերի անհավասարակշռության խնդրի լուծումը պահանջում է ջանքեր՝ որոշումների կայացման գործընթացները ժողովրդավարացնելու և տարբեր շահերի արդարացի ներկայացվածություն ապահովելու համար:

Մեջբերում. *«Երևի թե իշխանությանը պետք չի մեզ լսել, դրա համար էլ չի լսում բոլոր մակարդակներում՝ միջազգային քաղաքականությունից մինչև փոսալցումներ: Ամեն ինչ որոշված է, մեր ձեռքում չէ: Որոշման ողջ պատասխանատվությունը տրվում է կնիք ունեցողին» (Երևան):*

Միևնույն ժամանակ, որպես ուժերի անհավասարակշռություն, ներկայացվել է հետևյալ դիտարկումը՝ երբ ինչ-որ առաջարկ է ներկայացվում, պետական մարմինները պահանջում են, որպեսզի առաջարկին կից ներկայացվեն, օրինակ, թվային տվյալներ և ավելի ամուր հիմնավորումներ, որոնց հնարավորությունը, բնական է, չեն կարող ունենալ քաղաքացիները:

4.1.5 Բյուրոկրատիա

Կառավարության ներսում գործընթացները հաճախ կարող են լինել բարդ և բյուրոկրատական, ինչը կարող է խանգարել քաղաքացիական ակտիվ մասնակցությանը: Իսկ քաղաքացիների կողմից մասնակցության դժկամությունը հաճախ բխում է աչքի առաջ եղած խոչընդոտներից, ինչպիսիք են տեխնիկական ժարգոնը, խճճված ընթացակարգերը կամ ոչ հեշտ հասանելի հարթակները: Այնուամենայնիվ, կան հստակ օգուտներ այս գործընթացների պարզեցումից և ինտերֆեյսների բարելավումից՝ կառավարության նախաձեռնություններն ավելի մատչելի և ներառական դարձնելու համար:

Այդպիսով գործադիր մարմինները կարող են արդյունավետորեն խրախուսել քաղաքացիների ավելի լայն մասնակցությունը: Պարզեցումը ենթադրում է բարդ ընթացակարգերի բաժանումը հստակ, հասկանալի քայլերի՝ նվազագույնի հասցնելով ավելորդ բյուրոկրատիան և օգտագործելով բոլորի համար հասկանալի լեզու: Այս մոտեցումը ոչ միայն հեշտացնում է քաղաքացիների «նավարկելը» կառավարական գործընթացներում, այլև խթանում է կառավարության գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Ավելին, կառավարական հարթակները և ծառայություններն օգտագործողի համար հարմար ինտերֆեյսների բարելավումը կարող է զգալիորեն բարելավել դրանց կիրառումը: Սա ներառում է խելացի առցանց պորտալների և բջջային հավելվածների նախագծում, որոնք հեշտ նավարկելի են և համատեղելի տարբեր սարքերի հետ: Երբ քաղաքացիները կարող են անխափան մուտք գործել պետական ծառայություններ իրենց սմարթֆոններից կամ համակարգիչներից, նրանց ակտիվ ներգրավումը քաղաքացիական գործունեության մեջ և առկա ռեսուրսներն օգտագործելն ավելի հավանական է:

Ի վերջո, կառավարության գործընթացների պարզեցումը և ինտերֆեյսների բարելավումը նպաստում են կառավարության նախաձեռնությունների նկատմամբ վստահության ձևավորմանը: Երբ քաղաքացիներն ընկալում են, որ պետական ծառայությունները հասանելի են, թափանցիկ և նախագծված են՝ հաշվի առնելով իրենց կարիքները, նրանք, ավելի հավանական է, որ մասնակցեն հանրային ծրագրերին, տրամադրեն հետադարձ կապ և նպաստեն որոշումների կայացմանը: Այս աճող ներգրավվածությունը ոչ միայն ամրապնդում է ժողովրդավարական կառավարումը, այլև խթանում է քաղաքացիների սեփականության և պատասխանատվության զգացումը իրենց կառավարության և ողջ հասարակության նկատմամբ:

4.1.6 Իրական ներգրավվածության բացակայություն

Քաղաքացիները հաճախ ընկալում են կառավարության խորհրդակցությունները որպես զուտ խորհրդանշական վարժանքներ, որոնք նախատեսված են ներգրավվածության պատկեր ստեղծելու համար, մինչդեռ իրական որոշումներն արդեն կայացվել են փակ դռների հետևում: Այս ընկալումը քայքայում է վստահությունը գործընթացի նկատմամբ, ինչը հանգեցնում է անհատների թերահավատությանն իրենց ներդրումների ազդեցությանը: Երբ մարդիկ վստահ են, որ իրենց ներդրումն իրականում չի ազդի քաղաքականության արդյունքների վրա, նրանք ավելի քիչ հավանական է, որ ակտիվորեն մասնակցեն կամ ներդրումներ կատարեն խորհրդակցությունների գործընթացում:

Վստահությունը վերականգնելու և արդյունավետ ներգրավվածությունը խթանելու համար գործադիր մարմինները պետք է առաջնահերթություն տան անկեղծությանն իրենց խորհրդակցական ջանքերում: Սա ենթադրում է ավելին, քան պարզապես հետադարձ կապ պահանջելը. այն պահանջում է իրական հանձնառություն՝ լսելու և քաղաքականության մշակման մեջ բազմազան հեռանկարներ ապահովելու համար:

Կառավարությունները պետք է արձագանքեն՝ տրամադրելով հետադարձ կապ այն մասին, թե ինչպես է կիրառվել ներդրումը և բացատրելով, թե ինչպես է իրենց որոշումների վրա ազդել հանրային ներգրավվածությունը: Այս հաշվետվողականությունն օգնում է կամրջել քաղաքացիների և քաղաքականություն մշակողների միջև հաղորդակցության բացը:

Ի վերջո, կառավարության խորհրդակցությունների նկատմամբ վստահության ձևավորումը պահանջում է խորհրդանշական ժեստերից անցում դեպի իրական երկխոսություն և համագործակցություն: Երբ քաղաքացիները զգում են, որ իրենց ներդրումները կարևոր և հարգված են, նրանք, ավելի հավանական է, որ ակտիվորեն կներգրավվեն իրենց կյանքի վրա ազդող քաղաքականությունների ձևավորման մեջ:

4.1.7 Հաղորդակցություն և հետադարձ կապ

Արդյունավետ հաղորդակցությունը և ժամանակին հետադարձ կապը կարևոր են մասնակցային գործընթացներում վստահություն զարգացնելու համար: Կառավարությունները պետք է ակտիվորեն տեղեկացնեն, թե ինչպես են օգտագործվում քաղաքացիների ներդրումները, թարմացումներ տրամադրեն քաղաքականության զարգացումների վերաբերյալ և ցուցաբերեն հաշվետվողականություն՝ գործելով հանրային արձագանքների վրա: Թափանցիկ հաղորդակցությունը ստեղծում է վստահություն և խրախուսում է ժամանակի ընթացքում կայուն ներգրավվածությունը:

Մեջբերում. *«Իշխանափոխությունից հետո ոգևորված էի, կոնկրետ Երևանի հետ կապված 2-3 նախաձեռնությամբ հանդես եկա: Մերժումներից հասկացա, որ կառավարման օղակը խզված է: Լսելի չենք» (Երևան:)*

Կառավարության բարեփոխումների վերաբերյալ որոշումների կայացմանը մասնակցելու վստահության պակասի վրա ազդում են ազդել չկարողանալու մտավախությունները, թափանցիկության խնդիրները, պատմական հիասթափությունը, ուժերի անհավասարակշռությունը, գործընթացների բարդությունը, իրական ներգրավվածության բացակայությունը և անբավարար հաղորդակցությունը: Այս խոչընդոտների հաղթահարումը պահանջում է համատեղ ջանքեր՝ բարձրացնելու թափանցիկությունը, հաշվետվողականությունը և ներառականությունը կառավարության որոշումների կայացման գործընթացներում: Անդրադառնալով այս մարտահրավերներին՝ կառավարությունները կարող են ավելի մեծ վստահություն առաջացնել քաղաքացիների մոտ՝ ի վերջո ամրապնդելով ժողովրդավարական կառավարումը և նպաստելով հանրային քաղաքականության ձևավորմանը քաղաքացիների իսկապես արժեքավոր մասնակցությանը:

4.2 Գերատեսչություններին կից հասարակական խորհուրդների անդամների հետ հանդիպում

«Հանրային ասամբլեա» ՀԿ-ն, խնդրի կարևորությունն ու արդիականությունը հաշվի առնելով, նախաձեռնել է լրացուցիչ քննարկում գերատեսչություններին կից հասարակական խորհուրդների անդամների հետ:

Քննարկման հրավերն ուղարկվել է գերատեսչություններին կից խորհուրդների ՔՀԿ անդամներին՝ ապահովելու կարծիքների և դիտարկումների հնարավորինս լայն շրջանակ: Հանդիպմանը մասնակցելու ցանկություն հայտնածները ներկայացրել են ինչպես մի շարք նախարարությունների, այնպես էլ Երևանի քաղաքապետարանի և տեսչական մարմինների ղեկավարներին կից խորհուրդների աշխատանքը:

Բոլոր դեպքերում էլ մասնակիցներն ընդգծել են խորհուրդների աշխատանքների թերությունները և անարդյունավետությունը. նիստերը լավագույն դեպքում հրավիրվում են մի քանի ամիսը մեկ (օր.՝ ԿԳՄՍ), իսկ որոշ նախարարություններ անգամ ***վերջին մի քանի տարվա կտրվածքով որևէ նիստ չեն հրավիրել***: Այս մասին վկայում են նաև նախարարությունների պաշտոնական էջերի ուսումնասիրությունները, ըստ որոնց՝ նիստերի արձանագրությունները բացակայում են (նիստ գումարելու դեպքում դրանց զետեղումը պարտադիր է):

Նիստերի միջև չափազանց մեծ ինտերվալներից զատ՝ ՖԽ մասնակիցներն ընդգծել են նաև այդ հանդիպումների անարդյունավետությունը:

Մեջբերում. *«ԿԳՄՍ-ն այդ առումով ամենակարգապահներից է: 2018-ից ձևավորված խորհուրդը երբեմն նիստեր է անում, բայց դրանց հաճախականությունը բավարար չէ: Մենք, որպես խորհրդի անդամ, պատասխանատվություն ենք ստանձնել առաջարկներ անել իրենց քաղաքականության վերաբերյալ: Բայց, որպես կանոն, քննարկման ժամանակ մեզ ներկայացվում են արդեն կայացված որոշումները: Իսկ երբ դրանց առնչությամբ խնդիրներ ենք բարձրացնում կամ վերապահում հայտնում, հասկանում ենք, որ դրանց համար լուծումներ նախանշված չեն ու մեխանիզմներ էլ չկան: Այսինքն՝ եթե անգամ մենք, խորհրդի անդամ լինելով, չենք կարողանում խնդիրներն առաջ տանել, քաղաքացին ինչպե՞ս կարող է: Անգամ նախարարին ենք դիմել որոշ մարդկանց թերացումների հարցերով, սակայն ոչ մի ընթացք»:*

Հանդիպման մասնակիցներն ընդգծել են, որ քաղաքացիներին մտահոգող ոլորտային հարցերը խորհուրդների միջոցով նախարարներին հասցնելու մեխանիզմներն արդյունավետ չեն, իսկ խորհուրդները կենսունակ չեն, բարձրացված խնդիրների հանդեպ հետևողականություն չկա: Անգամ, իրենց ձևակերպմամբ, աբսուրդի հասնող երևույթներ կան: Մասնավորապես, երբ խորհրդի անդամները նիստի ընթացքում հարց են բարձրացրել, թե ինչ տրամաբանությամբ է ընտրվել դրամաշնորհը ստացող կազմակերպությունը, պատասխան է հնչել, թե՝ ըստ ճաշակի:

Մեջբերում*. «Դա նաև մարդկային գործոնով է պայմանավորված. երբ նախարարը հակված է բաց լինել քաղհասարակության հետ և նրանց միջոցով լսել քաղաքացիներին մտահոգող խնդիրները, ապա հաջողվում է հանրային հարցեր բերել քննարկման: **Շրջակա միջավայրի նախարարությանը** կից խորհուրդը ժամանակին բավականին ակտիվ էր: Եթե անգամ*

մերժվում էր, ապա բացատրվում էր մերժումը: Դիսկուրս կար, աշխատանքային խմբեր էին ձևավորվում: Հիմա՝ չէ. վերջին նիստը 1.5-2 տարի առաջ է եղել: Հարցնում ենք չանելու պատճառը, պատճառաբանում են, թե նոր խմբեր պետք է ձևավորեն: Մինչդեռ երբ ՄԱԿ-ին զեկույց են ներկայացնում, պնդում են, թե քաղհասարակությանը լսում են ու նիստեր են անում»:

Ըստ մասնակիցների՝ նախարարներին կից հասարակական խորհուրդները փաստացի չեն գործում, այդպես է, օրինակ, **Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության** դեպքում: **Արդարադատության նախարարությունում** էլ ֆորմալ առումով խորհուրդ ձևավորել են, բայց նիստեր չեն լինում, գերադասում են ոլորտային այլ խմբերի հետ հանդիպումները:

ՖԽ մասնակիցներն ընդգծել են, որ երբեմն անգամ քողարկված դիմակայություն կա հատկապես ակտիվ կամ «դժգոհող» քաղաքացիներին խորհուրդներում ընդգրկելու առումով. *«Գերադասում են իրենց համար ցանկալի մարդկանց ներգրավել: Նիստ անելիս էլ «գալոչկայի» համար ինչ-որ բան են նախաձեռնում»:*

Մեջբերում. *«Նախկին փոխվարչապետերից մեկի պաշտոնավարման ժամանակ կանանց խորհրդի նիստեր էին լինում, մեր առաջարկները լսում էին, դրանցով օրակարգ էին կազմում: Այդ ժամանակ հասկացանք, որ մինչև մենք անձամբ փոխվարչապետին այդ հանդիպումների ընթացքում չենք ներկայացնում խնդիրները, նրան այդպես էլ չեն զեկուցում մեր հարցերը: Բայց հիմա այլևս այդ նիստերն էլ չեն արվում»:*

Հանդիպման մասնակիցներն ընդգծել են՝ եթե անգամ նախարարությանը կից հասարակական խորհրդի նիստեր լինում են, ապա դրանք, որպես այդպիսին, գործուն մեխանիզմ չեն: Ընդամենը հանրային քննարկման լեգիտիմացմանն են ծառայում՝ ցույց տալու, թե նիստ եղել է. իրականում հարցերին ընթացք չի տրվում: Խոստանում են ներկայացված հարցերը հաջորդ նիստին ներառել, մինչդեռ հաջորդ նիստն, ասենք, 4 ամիս անց է, երբ հարցն արդեն դառնում է ժամանակավրեպ:

Մեջբերում. *«**Առողջապահության նախարարությանը** կից խորհրդի հազվադեպ նիստերին նախարարի հետ հանդիպում չի էլ կայանում, իսկ կարևոր որոշումները չեն ներկայացվում: Ակնկալում են, որ, ասենք, բյուջեի նախագիծն իր բոլոր ծախսային հոդվածներով մենք պետք է ուսումնասիրած լինենք, որ դիտարկումներ անենք»:*

*«Նույն վիճակն է **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում**: Իրենց ներկայացմամբ՝ իդեալական երկրում ենք: Խնդիր ես բարձրացնում, երբեմն հասցեագրում են առողջապահության նախարարությանը: Այնտեղից էլ՝ հակառակը: Օրինակ՝ պալիատիվ խնամքի խնդրի առումով: Հարցն այդպես էլ օդում է մնում»:*

Մեջբերում. *«**Էկոնոմիկայի նախարարին** կից խորհուրդը ստեղծվել է 2016թ-ին,մինչ այժմ ոչ կազմն են փոխել, ոչ լուծարել, ոչ էլ նիստեր հրավիրել: Նախկին նախարարը նախընտրում էր անհատական հանդիպումներ ունենալ բիզնես ակումբների և անհատ գործարարների հետ»:*

Մասնակիցներից մեկն էլ ընդգծել է, որ Երևանի քաղաքապետարանի հետ որոշ լավ նախաձեռնություններ ունեցել են, ավելի ակտիվ ու արդյունավետ, քան՝ կառավարության հետ: Նկատել է, որ նման նիստերն ու քննարկումները նաև լավ առիթ են՝ իրազեկվելու

իրականացվող այլ նախագծերի ու ծրագրերի մասին։ ԿԳՄՍ հետ նույնպես բավականին կառուցողական քննարկումներ են եղել։ Բայց մասնակիցը նաև շեշտել է՝ արդյունավետությունը պայմանավորված է հանդիպման ձևաչափով ևս. երբ հեղինակություն և ազդեցություն ունեցող կազմակերպությունների հետ է քննարկումը, վերջիններն ավելի լսելի են։ Այլ դեպքում նիստերն ու քննարկումներն ընդամենը մասնակցայնության լեգիտիմացման միջոց են։

Տեսչական մարմինների կառավարման խորհուրդների առնչությամբ մասնակիցներից մեկն ընդգծել է, որ խորհրդին լուրջ գործառույթներ են վերապահված. ամենակարևորը՝ նրանց քվեարկությունը որոշիչ է տեսչական մարմնի ղեկավարների և նրա տեղակալների նշանակման հարցում։ Կա նաև ցանկացած պահի արտահերթ նիստ հրավիրելու հնարավորություն։ «Կարգավորումների առումով իդեալականին մոտ վիճակ է», սակայն կատարողականի և արդյունավետության առումով բազմաթիվ խնդիրներ կան։ Մասնավորապես, խորհրդի կազմում անհամամասնորեն են ներկայացված պետական կառույցների և ՀԿ սեկտորի, բիզնեսի ներկայացուցիչները։ Այսինքն՝ վերջինների քվեարկության արդյունքները որոշիչ չեն կարող լինել։ Մյուս կողմից էլ խորհրդի նիստերի գերակշիռ մասին քվորում չի ապահովվում հենց պետական մարմինների ներկայացուցիչների բացակայության պատճառով. այս խորհուրդները ռոտացիոն կարգով նախագահում են ոլորտային նախարարները կամ փոխնախարարները։


5. Քանակական հարցաթերթերի արդյունքները

Մեթոդաբանության միջոցով դուրս բերված հարցերի շուրջ քննարկումներից բացի՝ մշակվել են նաև անանուն հարցաթերթեր, որոնք քաղաքացիների հետ հանդիպումների վերջում, ՖԽ-ային քննարկումներից հետո, անանուն լրացվել են մասնկիցների կողմից։ Արդյունքները ներկայացված են ստորև՝ Գծապատկեր 1-ում, որում մասնակիցների կողմից յուրաքանչյուր հարցին 1-10 բալային սանդղակում տրված գնահատականներն են՝ միջինացված։

Անանուն հարցաթերթերում լրացված պատասխանները համահունչ են ազատ քննարկումների ընթացքում բարձրացված հարցերի շուրջ հնչեցված կարծքիներին։ ՖԽ մասնակիցների մոտ ընդգծված էր անվստահությունը ընդունվող որոշումների հանդեպ։ Այդպես, օրինակ՝ հարցաթերթում 3-րդ՝ «*Պետության կողմից մշակվող օրենսդրական նախագծերը և ռազմավարությունները լիովին համապատասխանո՞ւմ են հասարակության կարիքներին*» հարցը վաստակել է **3,5 միավոր**, որը միջինից ցածր է։

Առավելագույն ցածր միավոր վաստակել է օրենսդրական նախագծերին, ռազմավարություններին քաղաքացիների հասանելիության մասին 8-րդ հարցը, որտեղ միջինացված միավորն ընդամենը **2,8 միավոր** է։

Գծապատկեր 1. Հարցաթերթերի գնահատումը միջինացված բալային (1-10 բալային գնահատում)



Միևնույն ժամանակ ՖԽ-երի մասնակից քաղաքացիները բարձր են գնահատել իրենց մասնակցությունը՝ համարելով որ իրենք ունեն բավարար հմտություններ՝ կարծիքներ հայտնելու, օրենսդրական քննարկումների մասնակցելու համար՝ **7,3 միավոր**:

Հատուկ ուշադրության են արժանի այս պահին գործող հարթակների մասին ներկայացված կարծիքներն ու գնահատականները: Այդպես, օրինակ՝ հարցաթերթի 5-րդ հարցը՝ «*Քաղաքացիների մասնակցության համար ստեղծված և ներկայում գործող մեթոդները, հարթակները (e-draft, Հանրագիր.հայ և այլն) լիովին բավարա՞ր են, որպեսզի կարողանան մասնակցել որոշումների կայացմանը.*» վաստակել է **3,6 միավոր**, իսկ հաջորդ հարցը, որը վերաբերվում է առկա հարթակների նկատմամբ վստահությանը, վաստակել է ցածր՝ **3,3 միավոր:**

Հաշվի առնելով Հայաստանի վերջին տարիների ռազմաքաղաքական իրավիճակը և աշխարհագրական դիրքը, մտահոգիչ է նաև քաղաքացիների գնահատականը ճգնաժամային իրավիճակներում երկրի արագ արձագանքման մեխանիզմների վերաբերյալ: Խնդիրներին տեղեկանալու մեխանիզմների նկատմամբ քաղաքացիների վստահության միավորը ևս ամենացածրերի խմբում է՝ **2,9 միավոր:**

Հարցաթերթի 9-րդ հարցի պատասխանները կազմված էին ոչ բալային, այլ եղած պատասխաններից ընտրանքային տարբերակով:

Նշեք խնդրեմ, թե նշված տարբերակներից ո՞րն է ամենահարմար և արդյունավետ տարբերակը, որպեսզի քաղաքացիները կարողանան իրենց կարծիքը հայտնել օրենսդրական նախագծերի, ռազմավարությունների վերաբերյալ:
1. Պաշտոնյաների, օրենքը մշակողների հետ անմիջական հանդիպում, քննարկում:
2. Դիմել հասարակական կազմակերպություններին, որոնք զբաղվում են քաղաքացիներին հուզող խնդիրներով և կարծիքը կարող են հասցնել պետական մարմիններին:
3. Ներկայում գործող էլեկտրոնային հարթակներ (e-draft, հանրագիր.հայ և այլն):
4. Բոլորովին նոր, մատչելի, հասանելի և հասկանալի էլեկտրոնային հարթակներ:
5. Նախարարություններին կից գործող հասարակական խորհուրդների կազմում քաղաքացիներին ընդգրկել:
6. Համայնքային, մարզային և պետական նոր խորհուրդների ստեղծում, որոնց կազմում կարող են ներգրավվել քաղաքացիները:
7. Այլ

Նշված հարցերի պատասխաններից առավել շատ ընտրված են եղել **1-ին**-ը և **4-րդ**-ը, որոնց միջոցով ՖԽ մասնակից քաղաքացիները կարևորել են պաշտոնյաների հետ անմիջական հանդիպումների միջոցով հարցերի քննարկումները և, իհարկե, նոր, ավելի հասանելի և հեշտ կիրառելի էլեկտրոնային հարթակների ներդրումը:

6. Վավերացման հանդիպում (validation meeting)

Town-hall ձևաչափով ՖԽ-ային հանդիպումների ավարտից հետո՝ 2024թ-ի մայիսի 10-ին, կազմակերպվել է ամփոփիչ վավերացման հանդիպումը: Հրավիրվել են վարչապետի աշխատակազմի ԲԿԳ քարտուղար համակարգողը, փոխվարչապետի գրասենյակից ներկայացուցիչ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի, Հանրային լրագրության ակումբի և այլ ներկայացուցիչներ: Սակայն, հաշվի առնելով այդ օրերին Երևան քաղաքում տեղի ունեցող իրադարձությունները, ոչ բոլոր մասնակիցներն են կարողացել մասնակցել: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Զեկույցի վերջնական նախագիծը շրջանառել էլեկտրոնային փոստով և արդյունքների հիման վրա մինչև մայիսի վերջ ամփոփել փաստաթղթում տեղ գտած դիտարկումներն ու առաջարկները: Արդյունքում, ԲԿԳ համակարգողի կողմից վերջնական պատասպանը ստացվել է 2024թ-ի հունիսիս 13-ին, որի հիման վրա ամփոփվել է այս Զեկույցը:

7. Առաջարկներ

Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում քաղաքացիներից ստացված արձագանքների լույսի ներքո նախանշվել են մի շարք առաջարկներ Հանձնառության

շրջանակներում քննարկվող՝ գործող մեխանիզմների և սպասվելիք փոփոխությունների մասով: Այս առաջարկներն օգտատերակենտրոն են, և դրանք հաշվի առնելը կարող է ապահովել Հանձնառության առավել արդյունավետ իրականացումը, ինչից բխող գործիքներն էլ կլինեն օգտագործողների կարողություններին և կարիքներին առավել համապատասխան:

7.1 ՖԽ քննարկումներից հավաքագրված առաջարկներ

- e-draft հարթակում քաղաքացիների մասնակցությունը դարձնել բովանդակային՝ կշիռ հաղորդելով քվեարկություններին և նկատառումներին: Բացի այդ, հարթակում մասնակցության/քվեարկության իրավունք տալ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ հաշվի առնելով, որ ներկայացված նախագծերը վերաբերում են Հայաստանի ներքին կյանքին:
- Արհմիությունների, միությունների «վերակենդանացում»՝ որպես հակակշիռների մեխանիզմ,
- Փոքր համայնքներում ամիսը կամ եռամսյակը մեկ տեղական հեռուստատեսային ալիքներով անցկացնել համայնքի ղեկավարի հետ հարց ու պատասխան՝ համաժամանակյա ռեժիմով, ինչը նաև կընկալվի որպես հրապարակային խոստում այս կամ այն հարցը լուծելու ուղղությամբ,
- Սահմանել կոնկրետ օրեր, երբ բոլորն իրավունք կունենան հանդիպել համայնքի ղեկավարի հետ մեծ դահլիճում,
- Հանրության առանձին խմբերի համար՝ դպրոցականներ, թոշակառուներ, բիզնեսի ներկայացուցիչներ և այլն, պարբերաբար կազմակերպել հանդիպումներ համայնքի պատասխանատու անձանց հետ: Նորից նկատի ունենն, որ տվյալ խմբերը նախօրոք իրազեկված լինեն, թե ամսվա հստակ և պարբերաբար որ օրն է իրենց հետ հանդիպման օրը:
- Գյուղացիական կոոպերացիաներին կենսունակություն հաղորդել. դրանք էլ գյուղական համայնքի խնդիրներր «մեկ բերանով» ներկայացնելու խոսափող են:
- Երիտասարդ աղջիկներն ու տղաները քաղաքացի-համայնք երկխոսությունն ակտիվացնելու մի քանի անելիք են կարևորել՝ դասընթացներ սեփական իրավունքների մասին, մասնագիտական քննարկումներ և/կամ իրազեկման տեսահոլովակներ՝ դիմում ներկայացնելու հարթակների և դիմում լրացնելու քայլերի մասին, մեծահասակների տեղեկացում՝ թերթերով կամ տեղական հեռուստատեսությամբ:
- Քաղաքային խորհրդի ստեղծում, որտեղ բիզնես համայնքի կարծիքները հաշվի կառնվեն հենց տվյալ մարզում, բնակավայրում առկա խնդիրների համատեքստում:
- Համայնքապետարանի բաժնի ղեկավարները տարին մեկ անգամ դեմ առ դեմ հաշվետվություն ներկայացնեն:
- Համայնքի ավագանին պարտադիր հաշվետու լինի, և դրա համար սահմանվի իրավական ակտ:
- Համակարգել գործընթացը, երբ, օրինակ, Երևանում բազմաբնակարան շենքի բնակչին ինչ-որ որոշում ընդունելու համար համատիրությունից թղթեր են բերում

ստորագրելու (շենքն առաջ տալ երեք մետրով, վարսավիրանոց կառուցել շենքի դիմացով)։ Այսինքն՝ այդպիսով մի կողմից քաղաքացուն տրվում է «այո» կամ «ոչ» ասելու հնարավորություն, բայց մյուս կողմից շենքի մակարդակում նման հարցեր լուծելը, առանց քաղաքաշինական պլանի առաջնորդվելու, հանգեցնում է խառնիճաղանջ վիճակի։

- Քաղաքապետարանում/համայնքապետարանում լինի կոնկրետ խնդրի ընդհանուր քննարկման օր։

7.2 Գերատեսչություններին կից խորհուրդների կենսունակությունը բարձրացնելու և ավելի լսելի դարձնելու առաջարկներ

- Արմատական փոփոխություն է պետք, որպեսզի գերատեսչությունը խորհրդից կախված լինի. առանց վերջինի համաձայնության նախագիծ չտարվի կառավարություն։ Հարկ է փոխել խորհրդի անդամներին ընտրելու կարգը (ներկայում հիմնականում կիրառվում է վիճակահանությունը)։
- Խորհուրդներում ՀԿ-ների ներկայացուցիչների ընդգրկելիս կիրառել որակի ինդիկատոր՝ հաշվի առնելով դրանց փորձը, ազդեցությունը, հանրային ձայնը օբյեկտիվ փոխանցելու կարողությունը։
- Ավելի ներկայանալի և լսելի դարձնել մարզային փոքր բիզնեսին. դրանք շատ փոքր մասնակցություն ունեն խորհուրդներում, բայց խնդիրների հիմնական կրողներից են։
- Պետական հատվածի ներկայացուցիչների համար կիրառել որոշակի սանկցիաներ խորհուրդներ չձևավորելու և/կամ նիստեր չանցկացնելու համար։ Սահմանել մեխանիզմ, որը կպարտավորեցնի դա անել։ Հստակեցնել չափորոշիչները՝ ինչպես ընտրել խորհրդի անդամներին, ինչ լիազորություններ տալ։
- Պետական կառույցում սահմանել կոնկրետ անձանց, որոնք պատասխանատու կլինեն խորհուրդների հետ աշխատանքի համար. այլապես այս հարցը միշտ մեկից մյուսի վրա է գցվում։
- Հանրային զգայունության կամ լայն քննարկման ենթակա հարցերը դնել պարտադիր քննարկման։ Հստակ նորմատիվ ակտով սահմանել, թե որ հարցերն են համարվում հանրային զգայունության հարցեր, և որ դրանք պարտադիր են խորհուրդներում քննարկման համար։
- Դնել սահմանափակում, որ երբ e-draft-ում ներկայացված նախագիծը քվեարկվելուց հետո էական փոփոխությունների է ենթարկվում, առանց նոր քվեարկության և խորհուրդներում քննարկման չհասնի գործադիր կամ օրենսդիր մարմին։
- Որպես նոր ձևաչափ՝ կազմակերպել 2 գերատեսչության (օր.՝ սոցապ և առողջնախ) խորհուրդների հանդիպում, որպեսզի միաժամանակ երկուսին վերագրվող հարցերը համատեղ քննարկվեն (օր.՝ պալիատիվ խնամք)։
- Գերատեսչությունների ղեկավարների հետ նաև ոչ պաշտոնական հանդիպումներ նախաձեռնել՝ ավելի բաց ու անմիջական քննարկելու խնդիրները։

- Առավել թափանցիկ դարձնել խորհուրդների աշխատանքները, օրինակ՝ ուղիղ հեռարձակում, օրակարգերի ոչ միակողմանի ձևավորում հրապարակային հաշվետվությունների ներդրման միջոցով։

8. Հավելվածներ

- Հավելված 1. «...Մեթոդաբանության հաշվետվություն»
- Հավելված 2. «Քանակական հարցաթերթ»